ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ԵՐԿՐԱԳՈՒՆԴ» ԼՐԱԳՐՈՒՄ

«Երկրագունդ» լրագիրը հրատարակվում էր Անգլիայի Մանչեստր քաղաքում 1863—1864 թթ.։ Նրա խմբագիրն էր հայ հասարակական և մշակութային գործիչ, ազգային-պահպանողական Կարապետ վ. Շահնազարյանը (1814—1865), որը 1862 թ. ստանձնել էր Մանչեստրի հայության հոգևոր առաջնորդի պաշտոնը։

«Երկրագունդ» լրագիրը հրատարակվում էր այն ժամանակ, երբ ավարտին էր մոտենում 1859—1860-ական թթ. սկսված իտալական ազգային-ազատագրական շարժումը։ Իտալիայի մեծ մասը միավորվել և դուրս էր եկել Ավստրիայի և Բուրբոնների լծի տակից։ Սակայն Իտալիային դեռ չէին միացել Վենետիկը և Հռոմը, իտալական ազգային-ազատագրական շարժման հերոս ղեկավարներ Ջուզեպպե Մազինին և Ջուզեպպե Գարիբալդին հսկայական գործ կատարեցին իրենց երկրի միավորման և անկախության համար։

Կ. Շահնազարյանի լրագիրը, որ հրատարակվում էր 1860-ական թթ. կեսերից, անդրադառնում էր իտալական ազատագրական շարժման միայն մի ժամանակահատվածին։ 1864 թ. «Սիկիլիայի և Նապոլիի փրկիչն և Կապրերայի անապատականը»՝ Ջուզեպպե Գարիբալդին, իր երկու որդիների հետ ուղևորվում է Անգլիա։ Տեղի անգլիական հասարակայնության մի մասը ենթադրում էր, որ Գարիբալդիի ուղևորության հիմնական նպատակը նշանավոր անգլիացի վիրաբույժից խորհուրդ հարցնելն էր։ Մյուսները գտնում էին, որ դա ունի քաղաքական նպատակ, որ Գարիբալդին «...իր հայրենյաց միավորության և բարեկեցության համար հղացած խորհրդոց կատարման համար ձեռնտվություն խնդրելու կգա»[1]։ Կ. Շահնազարյանը ողջունում է Գարիբալդիի ժամանումը և ցանկություն է հայտնում, որ Մանչեստրի հասարակությունն էլ մի «վայելուչ» պատգամավորություն կազմի և նրան հարգանքով ընդունի։ «Գարիբալդիի պես անձանց սիրտն այնչափ լայն և ընդարձակ է,—գրում էր Կ. Շահնազարյանը,—անոնց խորհուրդն այնպես վսեմ է, անոնց տեսության հորիզոնն տիեզերքի հորիզոնին հավասար գոլով, այսպիսի մարդիկ սիրտ բարեկամ են ոչ միայն իրենց հայրենակիցներուն, այլ և ընդհանուր մարդկային ցեղին»[2]։

«Երկրագունդը» հաղորդում է, որ «Գարիբալդի, հռչակավոր իտալացի զորավարն, մայիս 4-ին Սութամփտոն հասնելով՝ Մեծին Բրիտանիո ազատ ցամաքն կոխեց, ուր լսող Սութերլան, քաղաքապետն և տերության գրեթե ամեն կողմեն եկած երեսփոխաններն դիմավորեցին անոր»[3]։ Լրագիրը ավելացնում է, որ զորավարը Լոնդոն մտավ ամենամեծ հանդիսավորությամբ։

Մեկ այլ հաղորդման մեջ մի փոքր այլ ձևով է ներկայացվում Գարիբալդիի ժամանումը։ Նշվում է, որ Լոնդոնում Գարիբալդիին ընդունում են մեծ հանդիսավորությամբ, որ նրան դիմավորում են բնակչության բոլոր դասերի ներկայացուցիչները։ Լոնդոնում նախատեսված էր ի նշան նրա գալստյան հաղթական կամար պատրաստել։ Կոմիտեներ են ստեղծվում Լոնդոնում, որոնք պետք է հավաքեին մի մեծ գումար՝ հրացաններ գնելու և զորավարին հանձնելու համար[4]։ Լրագիրը հայտնում է, որ Գարիբալդիին դիմավորողների մեջ են եղել քաղաքապետ Ռիչարդսոնը, տիկին Շամբերսը, որը խնամել էր Գարիբալդիին Ասպրոմոնտեի ճակատամարտում (1862 թ.) վիրավորվելուց հետո։ Նրան դիմավորողների մեջ էին շատ իտալացիներ, հունգարացիներ և լեհեր։ Քաղաքապետարանի քարտուղարն այսպիսի խոսքերով է ողջունել նրան. «Գարիբալդիի անունն Անգլիո ամեն ընտանյաց ծանոթ է և թե ամենայն ոք դիտե անոր հերոսական քաջությունները, զորս ըրեր էր Իտալիո անկախու-

1 «Երկրագունդ», 1864, № 4։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, 1864, № 6։

4 Նույն տեղում։

թյան մասին»։ Գարիբալդին ևս իր հերթին շնորհակալություն է հայտնել թե՛ Անգլիո մեծ ազգին և թե՛ քաղաքապետին։

«Երկրագունդ» լրագիրը հանդես է բերում իր դրական վերաբերմունքը նաև իտալական ազատագրական շարժման մյուս ղեկավարի՝ Ջուզեպպե Մաձինիի նկատմամբ։ Թերթը հաղորդում է, որ Գարիբալդիի պատվին Լոնդոնում կայացել է միտինգ, որը ղեկավարել է խորհրդարանի անդամ պ. Կրավֆորդը։ Միտինգին մասնակցել են խորհրդարանի անդամներ Գոշեն և ուրիշներ։ Կրավֆորդը մի գեղեցիկ ճառ է արտասանել, նշելով Գարիբալդիի գործունեության նշանակությունը ոչ միայն իտալացիների, այլև համայն մարդկության համար։ Նա մասնավորապես Գարիբալդիին բնորոշել է «...իբրև արդի ամենաազնիվ հայրենասեր, իբրև ամենահերոս նահատակ, ոչ միայն միությանն Իտալիո, այլ նաև տիեզերական ազատության»[6]։ Անգլիական խորհրդարանի անդամները, որոնց թվում էին լորդ Պալմերստոնը, Գլադստոնը, լորդ Կլանոիկարդը, Մարքի դը Հարտրփուլը, Նյուկասլի դուքսը, նրան հրավիրել են Ճաշի։ Լոնդոնից բացի, Անգլիայի մյուս քաղաքները ևս՝ Լիվերպուլը, Մանչեստրը, Ցորքը, Դրնգին, Էդինբուրգը, Գլազգոն, Բիրմինգհամի խորհրդարանի անդամները խնդրել են «մեծ հայրենասերին»՝ Գարիբալդիին, այցելել իրենց քաղաքները նույնպես։ «Երկրագունդ» լրագրում տպագրվում է Գարիբալդիի հրաժեշտի ողջույնը ուղղված «ազատասեր» Անգլիո ազգին։ Այդ նյութը առաջին անգամ տպագրվել էր անգլիական «Թայմս» թերթում, որից թարգմանաբար հրատարակել էր Կ. Շահնազարյանը։ Գարիբալդին ասել է. «Ոչ ինչ ունիմ հիշեցնել Անգլիո ազգին, զոր արդեն չգիտե։ Նա գիտե Իտալիո տենչն։ Իտալիա որոշեր է ապրիլ. անիկա ապրելու իրավունք ունի։ Եթե ասոր համար կկասկածեն՝ կհավելցնեմ թե անի կապրի արդեն իրոք. և ոչ ինչ արգելու պիտի անոր լրումն։ Իտալիա մեկ փափագ միայն ունի, այսինքն է փշրել երկու թշնամի պետությանց լուծն, որք զնա կնեղեն»[7]։ Ապա նա ավելացրել է. «Ազատություն. ահա արևն, որ կրնա պտղաբեր ընել երկու քաղաքակիրթ ազգերու անկեղծ և ահավոր դաշնակցությունն։ Ասով, առանց թուրն պատենեն հանելու, աշխարհի խաղաղության մեծ գործն կվմննա»[8]։ Գարիբալդին համոզված էր, որ հասարակ անգլիացիները իրեն ազնվորեն են ընդունում, սակայն այլ էր իշխող շրջանների վերաբերմունքը։ Անգլիայի կառավարության դրդմամբ Գարիբալդիին առաջարկվեց հեռանալ Անգլիայից, մյուս խոշոր պետությունների հետ հարաբերությունները չվատացնելու համար։ Ձեվական պատճառաբանությունը այն էր, որ Անգլիայում եղանակը մշուշոտ է և գա վատ կանդրադառնա Գարիբալդիի առողջության վրա։

«Երկրագունդը» հանդես է բերում իր վերաբերմունքը Իտալիայի ազատագրության վերաբերյալ։ Այդ մասին են վկայում անընդհատ թվացող փոքրածավալ հաղորդումները։ Այսպես, օրինակ, լրագրի համարներից մեկում մի այսպիսի լուր է տպագրվել. «Վենետիկի գավառներուն և Տրենտե (Տրանտ) քաղաքին մեջ Ավստրիո կառավարության հրամանով բազմաթիվ տուներ խուզարկվեցան և անհամար անձինք կալանավորվեցան»[9]։ Լրագիրը դրանով դատապարտում է ավստրիական կեղեքիչ քաղաքականությունը Իտալիայի հանդեպ։ Մի փոքր հաղորդման մեջ լրագիրը նշավակում է այն դժանությունները, որ կատարվում էին Իտալիայի այն հատվածներում, որոնք գտնվում էին ավստրիական «երկաթե գավազանի տակ»։

Մեկ այլ հաղորդման մեջ «Երկրագունդը» անդրադառնում է գարիբալդիական շարժմանը։ Հայտնի է, որ XIX դարի երկրորդ կեսին հայ պարբերական մամուլը այս հարցի մասին շատ քիչ նյութեր է տպագրել։ Եվ ահա «Երկրագունդը» արձագանքում է և մի շատ հետաքրքիր փաստ է ներկայացնում իր ընթերցողներին։ «Տուրինեն եկած հեռագիրն կծանուցանե, թե Ավստրիա՝ Տիրոլի և Վենետկի գավառներուն մեջ գարիբալդյան մեկ գավ ի հայտ ածելով, և զինուց և պատերազմական մթերաց պահեստներ գտնելով, բազմաթիվ անձինք կալանավորելով բանտարկեց»[10]։ Այս փաստը ցույց է տալիս, որ դեռևս ավստրիական տիրապետության ներքո գտնվող իտալական գավառներում գարիբալդիականները զինվում են և դա էլ իշխանությունների համար առիթ է հանդիսացել մի շարք անձանց կալանավորելու։

1864 թ. «Երկրագունդ» լրագիրը «Տեսություն քաղաքականության» բաժնում ներկայացնում է Ֆրանսիայի և Իտալիայի միջև նույն թվականի սեպտեմբերի 15-ին կնքված պայմանագիրը։ Վերջինս իտալական լրագրերի մեկնաբանության նյութն է դարձել։ Նշված պայմանագրով Ֆրանսիան պարտավորվել է

---

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում, 1864, № 7։

7 Նույն տեղում, 1864, № 8։

8 Նույն տեղում։

9 Նույն տեղում, 1864, № 25։

10 Նույն տեղում, 1864, № 26։

երկու տարվա ընթացքում իր զորքերը հանել Իտալիայի պապական մարզից։ Իտալիան էլ իր հերթին Ֆրանսիայի հետ պայմանավորվել է հարձակում չսկսել «սրբազան պապի» իշխանության դեմ։ Մի շարք լրագրեր գրում են այն մասին, որ Ֆրանսիան երաշխավոր է նաև այն բանին, որ Ավստրիան «միշամուխ» չլինի Իտալիայի գործերին։ Մինչդեռ Վիկտոր-Էմմանուելը համտձտյնվել է Թուրինից Ֆլորենցիա տեղափոխել Իտալիայի մայրաքաղաքը։ Լրագիրը ցույց է տալիս, որ այդ պայմանագրով չի լուծվում Հռոմը միասնական Իտալիայի մայրաքաղաք դառնալու հարցը։ Եվ այնուհետև ցուցաբերում է իր քննադատական վերաբերմունքը Նապոլեոն III-ի նկատմամբ, գրելով. «Ասով Նապոլեոն Գ 15 տարի պապական կամակոր և բռնավոր վարչությունն իր դրոշակով և զենքով պաշտպանելեն հետո, իր պատասխանատվությունն ազատ կկացուցանե. և պապի ընտրությանն և կամացն կձգե իր ապառնին հոգալ»[11]։

Ֆրանսիայի և Իտալիայի միշև սեպտեմբերի 15-ի պայմանագիրը «Երկրագունդը» դիտում է իբրև չարիքի փոքրագույն և այս տեսանկյունով էլ գնահատում պայմանագիրը, գտնելով, որ գրանով նոր հեռանկարներ կբացվեն Իտալիայի մյուս մասերի՝ Վենետիկի և Հռոմի Իտալիայի հետ վերամիավորելու համար։ Լրագրի հաջորդ համարներում շարունակվում է այս հարցի քննարկումը և ցույց է տրվում որ «Իտալիոյ ձակատագիրն միշտ անստույգ և ողորմելի պիտի ըլլա՝ քանի որ անոր մասերն... մեկ ամբողջություն չկազմեն միակ կառավարության տակ»[12]։ Հասկանալի է, որ «Երկրագունդի» ակնարկը վերաբերում է Վենետիկին և Հռոմին։

Իտալական հարցերի քննարկումը պարզում է լրագրի տեսակետները հայերի միասնության մասին, որի կողմնակից էր լրագրի խմբագիր Կ. Շահնազարյանը։ Այս տեսակետից շատ հետաքրքրական է Շահնազարյանի լրագրում տպագրված «Ի՞նչ է ազգայնության ոգին» հոդվածաշարը։ Նա ներկայացնում է այն երկու մեծ տերությունները. Ռուսաստանը և Թուրքիան, որոնց տիրապետության տակ էր գտնվում մասերի բաժանված Հայաստանը։ Առավել գժվարին վիճակում էր գտնվում արևմտահայությունը, որ ենթարկվում էր անլուր հալածանքների։ Կ. Շահնազարյանի կարծիքով այդ տերությունները միայն իրենց ստեղծած բիրտ ուժով իրենց հպատակաց կիշխեն, այլ անոնց մարմնո վերա միայն և ոչ թե մտաց և զգացմանց։ Անոնք ամեն վայրկյան պատրաստ են հպատակ ազգերն ճնշել, ճմլել և անոնց ստացվածքն անոնց արյան և հոգվո և կենաց հետ ծծել. վասնզի մարդկային և ազգային իրավունք չեն ճանաչեր. վասնզի բնական և մարդավայել վարուց անհաղորդ են»[13]։ Ըստ Կ. Շահնազարյանի, Թուրքիայի միահեծան տերությունը վաղ թե ուշ կանգնելու է կործանման եզրին։ Կ. Շահնազարյանի այս հայացքները ժամանակի առումով առաջադիմական էին, քանի որ նա կանխագուշակում էր ֆեոդալական Թուրքիայի քայքայման ընթացքը։

Կ. Շահնազարյանը, պաշտպանելով հայ ազգի միասնության համար մղվող պայքարը, նշավակում է այն մեծահարուստներին, որոնք ոչնչով չեն օժանդակել ազգի միասնության համար մղվող պայքարին։ «Ժամանակ գալու է,—գրում է նա,—որ անոնց ազգակործանական արարքն մանրամասն և հականե հանվանե գրե թե ի՞նչ հալածանք, ի՞նչ աքսոր, ի՞նչ գրկանք, ի՞նչ անիրավություն, ի՞նչ բռնավորություն, ի՞նչ քսություն, ի՞նչ բանարկություն... ըրին մեր ազգի միաբանության և շահուն դեմ»[14]։ Այս տողերը մեզ հիշեցնում են Միքայել Նալբանդյանի գաղափարակից Հարություն Սրվանձյանի այն միտքը, երբ մեծ դեմոկրատը գանգատվում էր ազգի միաբանությանը քայքայող «մկներից»։ «Մկները նորեն երևան ելեր են»,—գրում էր Սրվանձյանը, և դատափետում ու զգուշացնում ազգի խաղաղությանը վրդովող և առաջադիմությանը խոչընդոտող «ազգին խավարաշրշիկ խումբին»՝ պետական պաշտոնյաներին։ Մի վատահեք նրանց, խորհուրդ էր տալիս Սրվանձյանը. «Տղա չըլլանք. սիրելի ընկերներս, այլ չգիտութենե տղայանանք»[15]։

Այսպիսով, Կարապետ Շահնազարյանը Իտալիայի բախտակից ժողովրդի պատմության օրինակով աշխատում էր ճիշտ դասեր տալ հայությանը։

Հ. Ա. ԱՍՄԱՐՅԱՆ

---

11 Նույն տեղում, 1864, № 29։

12 Նույն տեղում, 1864, № 39։

13 Նույն տեղում, 1864, № 4։

14 Նույն տեղում, 1864, № 15։

15 «Մեղու», 1862, № 156, էջ 61։